համարին ընդ մեծ և ընդ փոքր, բնակիչք 35,000 մահմետականք, իսկ Հայք 200 ևեթ ոգիք ասին լինել։

190. Յառաջնումն գլխաւոր տեղի է Արքե-ան աւան մերձ 'ի ծով, յեղը Վ.ԻԼՀ գետոյ, յորոյ հիւսիսոյ բաղում գետք մանուանք մտանեն 'ի ծով. և առ բերանովք նոցա կայ Դ.ԸԸ.ԲՂ-Ճ գեօղ յունէ ցամաքի, և յանուն նորա կոչի ծովածոցն գործեալ 'ի ցամաքակողզոյն Սալիանայ, մերձ 'ի գեօղն կայ Սարա կրղզեակ, առ որով հանգրուանք մարտիկ նաւաց Ռուսաց։ — Ի ՍԷՓԷՏԱՀ գլխաւոր տեղի է Ա-ոս աւան զոր նախ յիշեցաք յահեկէ Վ.ԻԼՀայ։ Իսկ 'ի ԼԷՆԿՈՐԱՆ համանուն իշխանանիստ քաղաքն յեղը ծովուն և 'ի բերան յարանուն գետոյն, ուր նաւահանգիստ է անքոյթ և վարուն, և անտի հանեն զորիզ և առաքեն 'ի Ռուսս. տունք քաղաքին ջրվապատեալ են պարիսպք. ունի և բերդ ամուր 'ի Ռուսաց կառուցեալ։ Ի բնակիչսն են և 34 երդ Հայք, եկեղեցեաւ հանդերձ։ — Ի սպառուած նահանգին 'ի սահմանակցութեան Կիլանայ կայ ԱՍՏԱՐԱ քաղաքաւան, 'ի բերան համանուն գետոյ. աստ նստին պայազատք խանից Թալիշայ։

Ը. ՊԱՔՈՒ ՆԱՀԱՆԳ

191. Նահանգս այս փոքր (իբրև 930 մղոն քառ.) որ և ընդ Շիրուանայ կուսակալութեամբ գրի ըստ զինուորական տեսչութեան, կայ յարևելեան սպառուածի աշխարհիս Հայոց և յունէ Կովկասու, լեզուաձև երկայնեալ ընդ ծով, յելից Քասպիսատանայ և Սումգայդ գետոյ, որով և 'ի լերանց Կովկասու անջրպետի։ Երկիր բարձր և քարուտ է, և հրուանդանս յոլովս ունի յերերս ծովու. գետ ոչ խաղայ յերկրի աստ, այլ լիճք միայն են տասնիւ չափ, և այնք դառն և աղի ջրոյ. վասն որոյ զանձրևաջուր ըմպեն 'ի գուբս ժողովեալ. այլ կլիմայն բարի է, ջերմ և անուշոգ, և բուսաբերութիւն ոչ յոյժ նըւազեալ, բարգաւաճէ և վաճառականութեամբ։ Քան զամենայն նշանաւոր յերկրի աստ են գուբքն և լճակք նաւթի բոցափայլ ծխելոյ. և հրաբուխքն, մանաւանդ թէ տղմաբուխ բլուրք, յորոց մին պատառեալ յամին 1817 զգայուեաց ընդ բոցոյ ծխոյ և տիղմն քարախառն։ Երկիրն համօրէն զանգեալ է նաւթի նիւթով, որ ոչ ուրեք այնպէս առատ գտանի որպէս աստ. և բաղում այն է զի ծակոտեալ ծորէ արտաքս, որպէս առ Պալոգանի կամ Պալէնան գիւղիւ 'ի հիւսիսոյ արևելից քաղաքին, ուր և 85 աւազանս հատեալ է 'ի վաղուց ժամանակաց, և անդ ժողովի նաւթն թխագոյն և կարմրանիշ. այլ 'ի մերձակայ բլրէ ուստեք բխէ և ստիտակ նաւթ, որ 'ի ջուր արկեալ բորբոքի. 200,000 ֆրանգաց բաժ է տերութեանն յայսմ նաւթէ։ Բնիկք երկրին 'ի պէտս լուսոյ և ջերմութեան վարեն զնաւթս, և վաճառականք տանին 'ի Պարս և 'ի Տաղստան։ Իսկ կէսլրք կամ փարսիք սերունդք հնոց հրապաշտից յառաջնոց անտի յանյիշատակ դարուց պաշտաման կրակի՝ դեգերեալ կան զվայրոքն, ատրուշան մշտավառ հրոյ կազմեալ մերձ գբոցն նաւթի և ծովուն, զոր Աթաշ-գէհան կոչեն, այն է Կրակեստղ, յԱԾՈՒՐ-ՄՅԾԱՆ տեղւոջ տափարակի, զորով վանս հաստատեալ է. և նաւթն պղպջակեալ ընդ գետինն եռայ, ծխէ և ցոլանայ. բուն մեհեանն յաւերժական վառման կրակին, Արքոխոգ կոչեցեալ, որմովք պարսպեալ է, և բագին բարձր ընդ աշտարակաձև խորանաւ, 'ի քառից ծայրից ունելով սիւնս բարձունս 25', ընդ որս ելանէ նաւթն խողովակաք խաղացեալ և բոցանայ ընդ ծխանսն զամպարափայլ ջահաւորութեամբ 'ի գիշերի՝ երեք ոտնաչափ բոցով, որ և նաւաց 'ի հեռուստ լապտերակերպ լոյս տայ. գործեալ են և շուրջանակի ծորակք կամ բերանք նաւթի, զոր մերձ ընդ մերձ բացեալ վառեն 'ի լուսաւորութիւն և 'ի հանդէս տանից. անդ կատարեն հրամանքն զաղօթս դենին իւրեանց, և ամի ամի ուխտաւորք գան 'ի Հնդկաց և 'ի Մալապարայ, և տանին 'ի սրբազան նիւթոյն։ Գոյ և լճակ մի նաւթի մերձ 'ի սոսա յարաշարժ ծածանմամբ, որ 'ի պայծառութեան գիշերոյ 'ի կայուտակային երփն հարեալ գեղեցիկ յոյժ փայլ հատանէ։ — Ի պատճառս կրակիս հաւանելի է ԶԱԹՇԻ կոչումն միոյ 'ի գաւառաց Կաղբից աշխարհի Հայոց, որ և յընթերակայն իւր կցեալ 'ի ԲԱԳԱՒԱՆ՝ կոչեցաւ ԱԹՇԻ-ԲԱԳԱՒԱՆ. այժմ կոչի երկիրս այս ԱԹՇԵՌՈՆ, որ ստուգաբանի ըստ պարսկի բարբառոյ Ատէ-ԷՐՐՈՆ, այսինքն է Ջուր շառաչող, զի մեծապէս և անդուլ շառաչեն ալիք ծովուն՝ առ Ատէշ-գիւղիւ 'ի ծայր թերակղզոյն. յորում են 40իւ չափ գեօղք, և 32,000 բնակիչք, Պարսք և Փարսիք և Թուրքք, և Հայք 600 ոգիք։ Յամէն 1806 Ռուսք ունին զերկիրս։

192. Քաղաքն ՊԱՔՈՒ, որ կրէ տակաւին զանուն Բագաւան գաւառի, 'ի հարաւային ծովեղեր թերակղզոյն կայ, յերի գբոցն նաւթի, լուսնաձև տարածեալ 'ի բարձր քարափին, ծովու շուրջ պարսպեալ, ունելով և դղեակ 'ի բարձրաւանդակի. ծուխն գործէ նաւահանգիստ գեղեցիկ ընդ մէջ քաղաքին և երկուց կղզեաց. զմասն մի քաղաքին ծածկեալ է աղեօքն, և յայլմէ մասանէ հեռացեալ։ Նշանաւոր է 'ի քաղաքին աշտարակ մի բարձր Գ.ԸՂ-Գ-ԼԷ անուն, մզկիթք, կարաւանատունք, եկեղեցի մի Հայոց և միւս Ռուսաց. բնակիչք 8,000։ Ամի ամի իբրև 220 նաւք գան 'ի Պաքու բառնալ նաւթ և քքքում և բամբակ, ևս և մեղաքս և աղ և ձուկն և որիզ. և ընդ ցամաք ձգին արահետ ճանապարհք 'ի Դարբանտ 'ի Գանձակ և 'ի Թալիշ։ — Յելից քաղաքին առ ծովեղերին կայ ՇԷԽ կամ ՍԷՓԷ գիւղ, յորում մզկիթ մի ուխտատեղի օրիորդի Պիսէհվէտ կոչեցելոյ. ընդ մէջ գեղջն և քաղաքին կան 27 գուբք նաւթի։ Մերձ 'ի Պելբքան է Իմիր-ԱՃԷՄ գիւղ, յորում գործի կապերտ սփռելի ազնիւ յոյժ։ — Ի հիւսիսոյ Ապշերոն գեղջ զոր 'ի վեր անդր յիշեցաք՝ կայ Բիբիալաբ կղզի որ կոչի ՍՎԷՆԼՈՒ ըստ Ռուսաց։